



ՄՆՆՂԱՄԹԵՐԻ  
ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ



010 206040  
012 906090



se.le@sele.am



0051, ք. Երևան,  
Կոմիտասի պող. 49/2

ԵՐԵՎԱՆ 2020



Սպանդանոցի կառուցումը և շահագործումն իրականացվում են զոտիզիենսիվ նորմերի և անասնաբուժաանիտարական ու բնապահպանական պահանջների պահպանմամբ:



Սպանդանոցները կառուցվում են բնակելի վայրերից, ֆերմաներից, արտավայրերից, հասարակական վայրերից, բժշկական հաստատություններից առնվազն 300մ հեռավորության վրա:



Սպանդանոցը կարող է լինել առանձին շինության, շինությունների համալիրի տեսքով կամ կենդանական ծագման մթերք արտադրող, վերամշակող կազմակերպությունների կազմում:

**Ըստ հերթափոխում իրականացվող մորթի քանակության կամ սպանդային միավորի՝ սպանդանոցները լինում են՝**

- 1) խոշոր՝ հերթափոխում 300-ից ավելի սպանդային միավոր հզորությամբ.
- 2) միջին՝ 30-300 սպանդային միավոր հզորությամբ.
- 3) փոքր՝ մինչև 30 սպանդային միավոր հզորությամբ:

**Սպանդանոցի փարածքը ստորաբաժանվում է հետևյալ 3 հիմնական գոտիների.**

- կենդանիների նախասպանդային պահման բազա՝ սանիտարական սպանդանոցով, կարանտինային բաժնով և մեկուսարանով,
- տնտեսական՝ օժանդակ կառույցներով, վառելիքի, շինարարական նյութերի պահեստներով.



Փոխադրամիջոցների անիվների ախտահանման համար արտադրության տարածք մտնելիս և ելնելիս դարպասների մոտ լինում է ավտահանիչ լուծույթով լցված հատուկ առու (ախտահանող պատնեշներ):



Ճանապարհների, բարձման բեռնաթափման հարթակների, ավտոմոբիլային և երկաթուղային հարթակների, սանիտարական կառույցահատվածի տարածքի, բացօթյա փարախների ասֆալտաբետոնային ծածկերը լինում են հարթ, անջրաթափանց, հեշտ ենթարկվում են լվացման և ախտահանման:

**Կազմակերպության փարածքում կառույցների, մասնաշենքերի փեղակայումը բացառում է հետևյալ հանդիպակաց հոսքերը.**

- ա) հումքի և պատրաստի արտադրանքի,
- բ) սննդամթերքի և կենդանիների, զոմաղթի, արտադրական թափոնների,
- գ) առողջ և հիվանդ, ինչպես նաև կասկածելի հիվանդ կենդանիների:



Սպանդանոցի տարածքը լինում է ցանկապատված, ունենում է թերություն դեպի հեղեղատար ջրահեռացման համակարգը՝ կեղտաջրերի, մթնոլորտային տեղումներից, ձնահալոցքից առաջացած ջրերի հեռացման համար: Կենդանիների պահման նախասպանդային բազայի, սանիտարական կառույցահատվածի, վառելիքային տնտեսության կեղտաջրերը չպետք է թափվեն կազմակերպության մյուս տարածքներ:



Տարածքը պահվում է մաքուր վիճակում: Տարվա տաք եղանակներին տարածքը ջրվում է, իսկ ձմռանը՝ մաքրվում ձյունից և սառույցից:



Աղբի հավաքման համար ամֆալտածածկ, բետոնածածկ կամ հեշտ մաքրման հնարավորություն չունեցող այլ հարթակների վրա տեղադրվում են կափարիչով ամուր փակվող տարողություններ: Հարթակները արտադրական և պահեստային մասնաշենքերից գտնվում են 25 մետրից ոչ պակաս հեռավորության վրա:

Տարողություններից աղբի և թափոնների հեռացումը կատարվում է օրը մեկ անգամից ոչ պակաս: Աղբը հեռացնելուց հետո տարողությունները լվացվում և ախտահանվում են:



Սպանդանոցն ունի մեկուսացված, բետոնապատ հրապարակ՝ կենդանիների արտաթորանքի և մարսողական ուղիների պարունակության հավաքման՝ 30 օրվանից ոչ պակաս տևողությամբ պահելու և կենսաջերմային եղանակով վասսագերծելու համար:



Սպանդանոցը պետք է ունենա անասնաբուժասանիտարական փորձաքննության անցկացման համար նախատեսված աշխատատեղ և հազեցած լինի համապատասխան լաբորատոր սարքավորումներով:



Սպանդանոցը պետք է ունենա կենդանիների տեղափոխման և սպանդից ստանված մթերքի համար նախատեսված համապատասխան մեքենաներ:



Սպանդանոցը ունենում է սանիտարական պահպանման գոտի, համաձայն «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր» ՄՆ 245-71-ի:



Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը և ներկայացվող պահանջները սահմանված է «Կառավարության 2006 թվականի N993 Ն որոշմամբ»:



Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին, լուսավորմանը, ջեռուցմանը, օդափոխությանը, միկրոկլիմային և աղմուկին, արտադրական և օժանդակ սեղաններին, կենդանիների նախասպանդային պահման բազային և տնխնորգիական գործընթացին ներկայացվող հիգիենիկ պահանջները սահմանված են «Առողջապահության նախարարի «Անի և մասմթերքի արտադրության կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.1-07-2003 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին հրամանով»:



Սպանդի հրականացնող տնտեսավարող սուբյեկտները իրենց գործունեությունը իրականացնում են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրվող սննդի շղթայի օպերատորների գործունեության եզրակացության հիման վրա: Տեստավարողը ստանում է անհատական նույնականացման համար և սկսում է իր գործունեությունը: